ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԷՔՍՊՐՈՄՏ

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես խուժեցիք վայրագ,
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես կկորչեք վայրագ:



«Ռոսիա» կինոթատրոնի շենքը. Երևան

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

ՍՊԱՍՈՒՄ

Թամանյան դիվիզիային

Պտղավորված այգիների զովը փռած ձեր ճամփին,
Պարտեզների շքեղահյուս գորգերն ամեն ձեր ճամփին,
Արարատի, Արագածի հայացքն ուղղած ձեր ճամփին,
Մեր երկիրը սպասում է, սպասում է ձեր գալուն:

Հայաստանի հովերն եկան ձեզ ընդառաջ՝ համբուրեն,
Ծաղկոցների բույրերն եկան ճամփանեռում ձեր բուրեն,
Թռան սրտերը մայրերի, որ փարվեն ձեզ, գուրգուրեն,
Մեր երկիրը սպասում է, սպասում է ձեր գալուն:

Եկե՛ք, քաջեր, հայոց քաջեր, նայում ենք մենք ձեր ճամփին,
Գորովալի մեր սրտերը փռած ահա ձեր ճամփին,
Կարոտավառ մեր հույզերը ու մեր սերը ձեր ճամփին,
Մեր երկիրը սպասում է, սպասում է ձեր գալուն:

1945